

## Հաշվետվություն

### ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից 2015 թվականի ընթացքում կատարված աշխատանքների մասին

Ըստ հաստատված ժամանակացույցի 2015 թվականի ընթացքում տեսչական ստուգումներ են իրականացվել ՀՀ բոլոր՝ 10-ը մարզերի մարզպետարանների աշխատակազմերի հողաշինության և հողօգտագործման բաժին, մարզային հողային պետական տեսչություններում:

Ըստ մարզերի տեսչական ստուգումների արդյունքները հետևյալն են.

**ՀՀ Արարատի մարզ-** Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 9 համայնքներում: Տեսչության պետի որոշմամբ միջնորդություն է ներկայացվել մարզպետին համայնքների ղեկավարներին **1750000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Մարզպետի կողմից կայացվել են որոշումներ 4 համայնքների ղեկավարներին ընդհանուր **550000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

**ՀՀ Արմավիրի մարզ-** Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 8 համայնքներում: Տեսչության պետի որոշմամբ միջնորդություն է ներկայացվել մարզպետին համայնքների ղեկավարներին **850000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Մարզպետի կողմից կայացվել է որոշում 1 համայնքի ղեկավարի ընդհանուր **150000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

**ՀՀ Կոտայքի մարզ-** Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 16 համայնքներում: Տեսչության պետի որոշմամբ միջնորդություն է ներկայացվել մարզպետին համայնքների ղեկավարներին **2650000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Մարզպետի կողմից կայացվել են որոշումներ

4 համայնքների ղեկավարներին ընդհանուր **600000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

**ՀՀ Շիրակի մարզ-** Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 22 համայնքներում: Տեսչության պետի որոշմամբ միջնորդություն է ներկայացվել մարզպետին համայնքների ղեկավարներին **750000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Մարզպետի կողմից կայացվել են որոշումներ 4 համայնքների ղեկավարներին ընդհանուր **500000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

**ՀՀ Գեղարքունիքի մարզ-** Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 11 համայնքներում: Տեսչության պետի որոշմամբ միջնորդություն է ներկայացվել մարզպետին համայնքների ղեկավարներին **1350000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Մարզպետի կողմից կայացվել են որոշումներ 6 համայնքների ղեկավարներին ընդհանուր **750000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

**ՀՀ Լուռու մարզ-** Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 6 համայնքներում: Տեսչության պետի որոշմամբ միջնորդություն է ներկայացվել մարզպետին համայնքների ղեկավարներին **1700000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Մարզպետի կողմից կայացվել են որոշումներ 5 համայնքների ղեկավարներին ընդհանուր **650000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

**ՀՀ Տավուշի մարզ-** Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 9 համայնքներում: Տեսչության պետի որոշմամբ միջնորդություն է ներկայացվել մարզպետին համայնքների ղեկավարներին **1050000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Մարզպետի կողմից համայնքների ղեկավարներին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներ չեն կայացվել, տրվել է ցուցում խախտումները վերացնելու համար:

**ՀՀ Արագածոտնի մարզ-** Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 7 համայնքներում: Տեսչության պետի որոշմամբ միջնորդություն է ներկայացվել մարզպետին

համայնքների ղեկավարներին **850000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Մարզպետի կողմից կայացվել են որոշումներ 2 համայնքների ղեկավարներին ընդհանուր **300000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

**ՀՀ Սյունիքի մարզ-** Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 14 համայնքներում: Տեսչության պետի որոշմամբ միջնորդություն է ներկայացվել մարզպետին համայնքների ղեկավարներին **400000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Մարզպետի կողմից կայացվել են որոշումներ 2 համայնքների ղեկավարներին ընդհանուր 200000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

**ՀՀ Վայոց Ձորի մարզ-** Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 13 համայնքներում: Տեսչության պետի որոշմամբ միջնորդություն է ներկայացվել մարզպետին համայնքների ղեկավարներին **5950000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Մարզպետի կողմից համայնքների ղեկավարներին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին **դեռևս որոշումներ չեն կայացվել:**

Իրականացված ստուգումների արդյունքում (10-ը մարզպետարաններ և 115 համայնքներ) տեսչության կողմից ՀՀ մարզպետներին ներկայացվել է միջնորդություն՝ թվով 70 համայնքների պաշտոնատար անձանց **17300000** դրամի գումարի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Մարզպետների կողմից կայացվել է թվով 28 համայնքների պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներ՝ **3700000** դրամ գումարի չափով: Նշանակված վարչական տույժերից 2015թ. պետական բյուջե է մուտքագրվել ընդամենը **3808000** դրամ, որից 2015 թվականին կիրառված վարչական տույժերից գանձվել է **2000000** դրամ, իսկ **1808000** դրամը նախորդ տարիներին կիրառված տույժերից: Ըստ մարզերի արդյունքներն հետևյալն է.

2015թ.-ի տեսչական ստուգումների ընթացքում արձանագրված վարչական տուգանքների, տեսչության պետի և մարզպետների կողմից կայացված որոշումների և գանձված գումարների ամփոփ տվյալներ

Հ/Հ	Մարզի անվանումը	Ստուգված համայնքների թիվը	Տեսչության պետի միջնորդագրի		Մարզպետի կողմից կայացված որոշումներով		2015թ.-ի ստուգումներով կիրառված տուգանքներից գանձված գումարի չափը	Նախկինում կիրառված տուգանքներից գանձված գումարի չափը
			Տուգանքի չափը	Հանդիմանքի թիվը	Տուգանքի չափը	Հանդիմանքի թիվը		
1	Արագածոտն	7	850000	7	300000	2	0	750000
2	Արարատ	9	1750000	8	550000	4	550000	150000
3	Արմավիր	8	850000	6	150000	1	0	0
4	Գեղարքունիք	11	1350000	7	750000	6	750000	0
5	Լոռի	6	1700000	6	650000	5	0	208000
6	Կոտայք	16	2650000	11	600000	4	0	700000
7	Շիրակ	22	750000	6	500000	4	500000	0
8	Սյունիք	14	400000	4	200000	2	200000	0
9	Տավուշ	9	1050000	4	0	0	0	0
10	Վայոց Ձոր	13	5950000	11	0	0	0	0
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>115</b>	<b>17300000</b>	<b>70</b>	<b>3700000</b>	<b>28</b>	<b>2000000</b>	<b>1808000</b>

Տեսչության կողմից կոմիտեի աշխատակազմի՝ Երևանի տարածքային, *Մարզերի միավորված*, Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզային ստորաբաժանումներում իրականացվել են հերթապահ կադաստրային քարտեզների վարման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ, որի արդյունքում արձանագրվել են մի շարք թերություններ:

Ստորաբաժանումների ղեկավարները գրություններով հայտնել են, որ տեղեկանքներում արձանագրված թերությունները իրենց կողմից ընդունվել են,

արձանագրված թերությունները ամբողջությամբ վերացվել են և բոլոր աշխատակիցների ուշադրությունն է հրավիրվել դրանք հետագայում բացառելու համար: Նշված թերությունների վերաբերյալ տեղեկանքները և ստորաբաժանումների ղեկավարների կողմից թերությունները վերացնելու մասին գրությունները հրամանի պահանջների համաձայն զեկուցագրերով ներկայացվել են կոմիտեի նախագահին:

Տեսչության կողմից տեսչական ստուգումներ են իրականացվել Արմավիրի, Կոտայքի և Շիրակի մարզպետարանների աշխատակազմերի հողաշինության և հողօգտագործման բաժին- մարզային հողային պետական տեսչությունների կողմից մարզերի համայնքների, վարչական տարածքներում գոյություն ունեցող պետական և ազգային գեոդեզիական ցանցի կետերի, վարչատարածքային միավորների սահմանանիշերի առկայության, պահպանման և հաշվառման նկատմամբ իրականացված վերահսկողական աշխատանքների նկատմամբ:

Իրականացված ստուգումների արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Հաստատված ժամանակացույցի համաձայն տեսչական ստուգումներ են իրականացվել նաև ՀՀ մշակույթի նախարարության համակարգում գտնվող <<Պատմամշակույթային ժառանգության գիտահետազոտական կենտրոն>> ՊՈԱԿ-ում և Երևանի քաղաքապետարանի Ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում առկա քարտեզագրագեոդեզիական նյութերի ու տվյալների հաշվառման, պահպանման, օգտագործման և տրամադրման նկատմամբ:

Իրականացված ստուգումների արդյունքում խախտումներ չեն արձանագրվել: